բանիւք անարգեցին զնա, փոխանակ այնքան բարեացն։ Եւ նորա վիրաւորեալ սրտիւ եկ եւ գնաց 'ի Ղալաթիա, զփոխարէնն այսչափ երախտեաց մերոց, այսպիսի բանիւք վճարեցին ասէ։

Գրիգոր Պատրիարք կարի նեղեալ յերեսաց այլազգեաց սակս չինութեանց և նորոգութեանց վանօրէից յԵրուսաղէմ, և զի մի զնոյն դառնութիւն կրեսցէ 'ի դարձին իւրում, խնդրեաց 'ի Սուլթան Օսման արքայէ՝ և էառ հրովարտակ վասն այնոցիկ, զի մի հակառակեսցին այլազգիք։ Էառ նաեւ հրովարտակ վասն նորոգութեան։ Ս։ Յովհաննէս եկեղեցւոյն 'ի գաւթի տաճարին Ս։ Յարութեան, և դարձ արարեալ անտի, մատոյց զայն առ դատաւորն, եւ եկ ինքն անձամբ 'ի քննութիւն տեղւոյն և 'ի գիր արձանացոյց զամենայն տեղիսն, և պատուիրեաց չառնել աւելի զերս ինչ, որպէս խստագոյնս պատուիրէր Արքայ 'ի հրովարտակին, չանցանել երբէք զչափն առաջին և չզարդարել, և եթէ ոք համարձակեսցի, եւ կամ հրաման տացէ՝ կրեսցէ պատիժ ըստ արժանեաց, նմին իրի կարի զգուշանային դատաւորք, իսկ Գրիգոր նորոգեաց զեկեղեցին, և դարձոյց զմեծ կամարն արտաքին, կրեալ նեղութիւնս ոչ սակաւ, \•Հ\ (1631)։ Յաւուրց անտի Մարտիրոս Եպիսկոպոսի՝ որ էառ զվերնատունն 'ի տաճարին Ս։ Յարութեան։ Յետ կորուսանելոյ զԳողգոթայն, եւ սահմանեաց զայն եկեղեցի Հայոց։ կայր մնայր այնպէս յանձկութեան և անբաւական ժողովրդոց եւ ուխտաւորաց։ իսկ Գրիգոր Պարոն Տէր կամելով ընդարձակել զայն՝ էած 'ի քննութիւն զդատաւորն և զայլազգիս քաղաքին, և եցոյց զընդարձակութիւն տեղւոյն Լատինաց՝ և զանձկութիւն իւրոցն։ և ըստ հրամանի դատաւորին՝ Լատինք հաճեցան զառաջինն տալ Հայոց զերիս կամարս 'ի դիւրութիւն ժողովրդոց, այլ յետոյ ժխտեալ զբանս իւրեանց չոգան առ դատաւորն՝ և յայտ արարին անդ թէ՝ չէ հնար առանց հրամանի թագաւորացն Եւրոպիոյ տալ մատնաչափ տեղի այլոց, ուստի ոչ կարեմք տալ զկամարսն։

Տեսեալ Գրիգորի թէ ոչ կայրն նոքա 'ի խոստման իւրեանց՝ կալաւ զայլ ինն ճանապարհ իրաւախոհութեան, ետ նոցա զՊարտէզ կոչեցեալ տեղին առաջի դրան եկեղեցւոյ